ԵՊՀ ԻՄ-ում ուսանողների գիտելիքների գնահատման գործող համակարգի վերաբերյալ դասախոսական և ուսանողական հարցման արդյունքների ամփոփում

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում 2008թ.-ից գործում է ստացած և ցուցաբերած գիտելիքների ստուգման և գնահատման կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ:

Գնահատման այս համակարգի առավելություններն ու թերությունները վերհանելու, շտկելու, զարգացնելու, նաև գնահատման արդյունավետության բարձրացման ուղիներ գտնելու համար մասնաճյուղում Կրթության որակի ապահովման և գնահատման (ԿՈԱԳ) բաժնի որոշմամբ **/21.02.2013թ. արձ. թիվ 2/** 2012/13 ուստարվա I կիսամյակի քննաշրջանից հետո կատարվել է ուսումնասիրություն՝ հարցման միջոցով: Մասնաճյուղի 48 դասախոսների և 94 ուսանողների շրջանում անց է կացվել հարցում ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների գիտելիքների գնահատման գործող կարգի վերաբերյալ: Հարցման նպատակներից մեկն էր պարզել, թե արդյոք գործող համակարգը թույլ է տալիս լիարժեք բացահայտել ուսանողի գիտելիքները, այն օբյեկտիվ գնահատել, և ինչը չի բացահայտվում գնահատման այս համակարգում: Ուսանողների շրջանում նման հարցման նպատակն էր պարզել նաև ուսումնառողների կարծիքը՝ գիտելիքների գնահատման ակադեմիական ազնվության վերաբերյալ: Հարցման արդյունքներն ամփոփվել են ԿՈԱԳ բաժնում **/23.04.2013թ. արձ. թիվ 4/,** իսկ ընդհանուր արդյունքները ներկայացնում ենք ստորև բերվող դիագրամում.

ա. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների գիտելիքների գնահատման գործող համակարգի վերաբերյալ դասախոսական հարցման արդյունքները



բ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների գիտելիքների գնահատման գործող համակարգի վերաբերյալ <u>ուսանողական հարցման արդյունքները</u>



Հարցաթերթն ընդգրկում է նաև առաջարկությունների բաժին, ըստ որի՝ եթե հարցման մասնակիցները գտնում են, որ գնահատման գործող համակարգը պետք է փոխարինել այլ համակարգով, ապա առաջարկվող տարբերակներից որը կնախընտրեին: Համաձայն մշակված արդյունքների՝ հարցմանը մասնակցած դասախոսների 42%-ը, իսկ ուսանողների 28%-ը կողմնակից է գրավոր միջանկյալ քննությունների և բանավոր եզրափակիչ քննության տարբերակին.

դասախոսներ



ուսանողներ



Ըստ հարցման արդյունքների՝ ուսանողների 56%-ը, իսկ դասախոսների 79%-ը ընդունելի են համարում գործող կարգը և գտնում են, որ գնահատման բազմաէտապ համակարգը բարձրացնում է գնահատման օբյեկտիվությունը:

Հարցմանը մասնակցած ուսանողների 62%-ը գտնում է, որ իրեն հայտնի է քննական առարկայից իր գնահատականի ձևավորման մեխանիզմը, իսկ դասախոսների 73%-ը վստահ է, որ ուսանողը գիտի, թե ինչպես է ձևավորվում իր քննական գնահատականը: Սա խոսում է գնահատման ակադեմիական ազնվության ապահովման մասին: Սակայն հարկ է նշել, որ թեստային

համակարգը մեծացնում է արտագրելու հնարավորությունները: Դրա մասին են վկայում հարցման արդյունքները (դասախոսների 66%-ը, ուսանողների 65%-ը):

Ելնելով ուսանողների և դասախոսների հարցման արդյունքներից՝ ԿՈԱԳ բաժնում սկսված է այլ առաջատար բուհերի գնահատման կարգերի համեմատական վերլուծության գործընթաց: Նոր կրթական չափորոշիչներին համապատասխան՝ ուսանողի մեջ պետք է ձևավորվեն որոշակի գիտելիքներ, ձեռք բերվեն գիտելիքների կիրառման որոշակի հմտություններ և իրեն դրսևորելու կարողություններ, հետևաբար՝ գնահատման համակարգը պետք է բացահայտի ուսանողի վերջնարդյունքներն ըստ նշված 3 բաղադրամասերի: Բաժնի մասնագետին հանձնարարվել է ուսումնասիրել ՀՀ-ի, արտերկրի (մասնավորապես՝ Ռուսաստանի) առաջատար ՄՈՒՀ-երի գնահատման համակարգերը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկ գնահատման համակարգի բարելավման համար: Մեր դասախոսների և ուսանողների կողմից ակնկալում ենք նոր առաջարկներ: